հեծաւ 'ի վերայ մեր և վարեաց մեզ ուր որ ինքն կամեցաւ, և երբեմն դրացիք մեր արարին մեզ իբրև շունս յորսորդի 'ի պատճառէ անկարգութենէ մերմէ՝ հաւատալով մեր 'ի յորդորմունս նոցայ իբր արդարութիւն ելանելով մեք առ հարաւ և առ արևմուտս Ցունք խածատել թշնամեաց և դրացեաց մերոց և 'ի ժամանակի վրէժխնդրութեան խածատելոց մերոց, 'ի վերայ մեր ելին՝ խածատեալքն ցան և ցիր մեզ արարին, յայնժամ յորդորողք մեր մեզ բարձի թողի արարին ոչ ինչ կողմանէ Օգնական ոչ եղեն, բայց 'ի ժամանակի Շահելոյ մեր զկամս նոցայ 'ի վերայ մեր յաղօթս առնել խոստացան և 'ի կաղանալոյ մերոյ Շահելոյն կամաց նոցայ հրաժարեցան մեզանէ և մեզ նզովելով նախատեցին բանիւ ստութեամբ այսինքն, մեք վատ Քրիստոնեայք և անհնազանդ անտանելի հրամանաց նոցայ, որպէս 'ի միջի գրեանց նոցայ լցեալ տեսանեմք և զամենայն զոր ինչ նոցայ մեղադիր վասն մեր բոլորովին սուտ, և 'ի տանէ և 'ի ազգէ և 'ի Եկեղեցւոյ Հայաստանեաց անծանօթ՝ որ ոչ ոք մեղադրութիւնք 'ի նոցանէ վասն մեր 'ի միջի մերոյ ոչ երբէք գտաւ արդար, եթէ ոչ 'ի պատճառն մեղմութենէ մերմէ ասացին զոր ինչ կամեցան, այլ այժմ երկայնամիտ լերուք բարեկամք այսքան անկարգութեամբ վարելով զկեանս մեր՝ տալով տեղի այնքան ամօթանաց գալոյ 'ի